ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի «ջրօգտագործման թույլտվություն» հասկացության «ջրային ռեսուրսից ջրառի, այդ թվում՝» բառերը փոխարինել «ջրօգտագործման, այդ թվում՝ ջրային ռեսուրսից ջրառի,» բառերով։

Հոդված 2. Օրենսգրքի **30-րդ** հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ**.**

«Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը ջրօգտագործման թույլտվությունը տրամադրում է ջրօգտագործողին 50 աշխատանքային օրվա ընթացքում, ինչը կարող է երկարաձգվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով։»։

Հոդված 3. Օրենսգրքի **32-րդ** հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ**.**

«Գետի հունի մաքրման կարգը սահմանում է Կառավարությունը։»։

Հոդված 4. Օրենսգրքի **33.1**-ին հոդվածի՝

1) 2-րդ կետի «ծանուցում ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, գործող ջրօգտագործման թույլտվությունը վերանայման ներկայացնելու» բառերը փոխարինել «գործող ջրօգտագործման թույլտվության վերանայման» բառերով**.**

2) 3-րդ կետի «դրանք ներկայացնելուց հետո՝» **բառերը հանել։**

Հոդված 6. Օրենսգրքի **37.1**-ին հոդվածի 10-րդ մասի «**37.1**-ին» բառերը փոխարինել «**37.1.1**-ին» բառերով։

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։